ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՀՈԴՎԱԾ** 1. «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-134-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասում «և կենցաղային» բառերը փոխարինել «, կենցաղային, զվարճանքի, այդ թվում՝ հեստապարային» բառերով:

**ՀՈԴՎԱԾ** 2. Օրենքի 14--րդ հոդվածը լրացնել նոր՝ 5-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5. Արգելվում է բաղնիքների (շոգեբաղնիքների) և սաունաների գործունեությունը բազմաբնակարան շենքերում, հանրակրթական, ուսումնական, մշակութային, առողջապահական և սոցիալական ծառայություններ իրականացնող հաստատություններում:

Համայնքի վարչական տարածքում գտնվող բաղնիքների (շոգեբաղնիքների) և սաունաների օբյեկտների շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները, տեղակայման վայրերի ցանկը և գործունեության թույլտվությունների պայմանները սահմանում է համայնքի ավագանին»:

**ՀՈԴՎԱԾ** 3. Օրենքը լրացնել նոր՝ 4.1-ին և 4.2-րդ գլուխներով՝ հետևյալ բովանդակությամբ.

## «ԳԼՈՒԽ 4.1.
## ՀԵՍՏԱՊԱՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

### ՀՈԴՎԱԾ 15.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սույն օրենքի իմաստով հեստապարային ծառայության հիմնական հասկացություններն են՝

1) ***հեստապար***՝ պարերով կամ երաժշտությամբ ուղեկցվող բեմական էրոտիկ ներկայացում, որի մասնակիցները ներկայացման ընթացքում աստիճանաբար մասամբ՝ մինչև գոտկատեղը կամ լրիվ մերկանում են.

2) ***հեստապարային ծառայություն***՝ հեստապար մատուցող ծառայություն.

3) ***հեստապարային օբյեկտ***՝ զվարճանքի օբյեկտ, որտեղ կազմակերպվում է հեստապար.

4) ***հեստապարի մասնակից***՝ պարող կամ պարուհի.

5) ***կազմակերպիչ***՝ հեստապարային օբյեկտի գործունեությունը կազմակերպող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր.

6) ***սպասարկող անձինք***՝ մատուցող, բարմեն, հանդերձապահ, դռնապահ, կառավարիչ, անհրաժեշտ տեխնիկական սպասարկում իրականացնող այլ անձինք.

7) ***հաճախորդ***՝ հեստապարային ծառայությունից օգտվող անձ:

### ՀՈԴՎԱԾ 15.2. ՀԵՍՏԱՊԱՐԱՅԻՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Արգելվում է հեստապարային օբյեկտների տեղակայումը բազմաբնակարան շենքերում, հանրակրթական, ուսումնական, մշակութային, առողջապահական և սոցիալական ծառայություններ իրականացնող հաստատություններում:

2. Համայնքի վարչական տարածքում գտնվող հեստապարային օբյեկտների շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները, տեղակայման վայրերի ցանկը և գործունեության թույլտվությունների պայմանները սահմանում է համայնքի ավագանին:

3. Հեստապարային օբյեկտը պետք է ունենա անվտանգության ծառայություն և ապահովված լինի արտաքին տեսահսկման և փաստագրման միջոցներով ու համակարգերով՝ օրվա մութ ժամերին նկարահանելու և տեսաձայնագրությունն առնվազն 10 օր պահպանելու հնարավորությամբ:

4. Հեստապարային օբյեկտի մուտքի ցուցանակի վրա պետք է ընթեռնելի գրված լինի, որ 18 տարին չլրացած անձանց մուտքն արգելվում է:

5. Հեստապարային օբյեկտների՝ դրսի կողմից փակցված ցուցանակներում, ցուցափեղկերում, ինչպես նաև տեղեկատվության տրամադրման այլ միջոցներում արգելվում է սեռական բնույթի որևէ տեղեկատվություն, հեստապարերի նկարագրություն կամ դրանք նկարագրող լուսանկարներ կամ պատկերներ զետեղելը:

6. Արգելվում է 18 տարին չլրացած անձանց մուտքը հեստապարային օբյեկտ: Այդ նպատակով նրանցից կարող է պահանջվել անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ:

7. Հեստապարի մասնակից չի կարող լինել 18 տարին չլրացած անձը:

8. Արգելվում են հեստապարային օբյեկտների ներկայացումներում լրիվ մերկ ելույթները:

9. Սպասարկող անձ չի կարող լինել 21 տարին չլրացած անձը:

10. Հեստապարային օբյեկտը պետք է ապահովված լինի հեստապարի մասնակցի՝ մեկուսացված և ուղղակի մուտքով դեպի հանդերձասրահ:

11. Արգելվում է հաճախորդի և հեստապարի մասնակցի միջև ֆիզիկական շփումը, ինչպես նաև հաճախորդի մասնակցությունը հեստապարին: Հաճախորդի և հեստապարի մասնակցի միջև հեռավորությունը պետք է լինի ոչ պակաս, քան 2 մետր:

12. Համայնքներում հեստապարային ծառայություն ժամը 24.00-ից, իսկ Երևան քաղաքում՝ ժամը 23.00-ից հետո մատուցելու համար կազմակերպիչը պետք է ունենա համայքներում՝ համայնքի ղեկավարի, իսկ Երևան քաղաքում՝ համապատասխան վարչական շրջանի ղեկավարի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով տրված թույլտվություն:

### ՀՈԴՎԱԾ 15.3. ՀԵՍՏԱՊԱՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՎԱԶԴԸ

1. Հեստապարային ծառայության գովազդը իրականացվում է «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

## ԳԼՈՒԽ 4.2
## ԶՎԱՐՃԱՆՔԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ՀՈԴՎԱԾ 15.4. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սույն օրենքի իմաստով զվարճանքի ծառայության հիմնական հասկացություններն են՝

1) ***զվարճանքի ծառայություն***՝ հաճախորդի հաճելի ժամանցի, ուրախության և հանգստի ծառայող զբաղմունքի կազմակերպման ծառայություններ, որոնց հետ համատեղ կարող են մատուցվել նաև հանրային սննդի ծառայություններ:

Զվարճանքի ծառայությունների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2) ***զվարճանքի օբյեկտ***՝ զվարճանքի ծառայության իրականացման համար կառուցված կամ այդ նպատակին հարմարեցված ու սարքավորված շենք, շինություն կամ այլ տարածք.

3) ***կազմակերպիչ***՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն աշխատանքներ է կատարում հաճախորդի հաճելի ժամանցի, ուրախության և հանգստի ծառայող զբաղմունքի կազմակերպման ուղղությամբ.

4) ***հաճախորդ***՝ զվարճանքի ծառայությունից օգտվող անձ.

5) ***սպասարկող անձինք***՝ մատուցող, բարմեն, հանդերձապահ, դռնապահ, կառավարիչ, անհրաժեշտ տեխնիկական սպասարկում իրականացնող այլ անձինք.

## ՀՈԴՎԱԾ 15.5. ԶՎԱՐՃԱՆՔԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Զվարճանքի ծառայություններն իրականացնում են իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը:

2. Զվարճանքի օբյեկտը պետք է ապահովված լինի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով:

3. Ելնելով զվարճանքի օբյեկտի առանձնահատկություններից՝ դրանց վրա տարածվում են սույն օրենքի 11-րդ և (կամ) 14-րդ հոդվածներով ներկայացվող պահանջները:

4. Արգելվում է զվարճանքի օբյեկտների տեղակայումը բազմաբնակարան շենքերում, հանրակրթական, ուսումնական, մշակութային, առողջապահական և սոցիալական ծառայություններ իրականացնող հաստատություններում:

5. Զվարճանքի օբյեկտը պետք է ապահովված լինի արտաքին տեսահսկման և փաստագրման միջոցներով ու համակարգերով՝ օրվա մութ ժամերին նկարահանելու և տեսաձայնագրությունն առնվազն 10 օր պահպանելու հնարավորությամբ:

6. Համայնքի վարչական տարածքում գտնվող զվարճանքի օբյեկտների շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները, տեղակայման վայրերի ցանկը և գործունեության թույլտվությունների պայմանները սահմանում է համայնքի ավագանին:

7. Համայնքներում զվարճանքի ծառայություն ժամը 24.00-ից, իսկ Երևան քաղաքում՝ ժամը 23.00-ից հետո մատուցելու համար կազմակերպիչը պետք է ունենա համայքներում՝ համայնքի ղեկավարի, իսկ Երևան քաղաքում՝ համապատասխան վարչական շրջանի ղեկավարի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով տրված թույլտվություն:

## ՀՈԴՎԱԾ 15.6. ԶՎԱՐՃԱՆՔԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂԻՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Ելնելով զվարճանքի օբյեկտի առանձնահատկություններից՝ կազմակերպչի և սպասարկող անձանց վրա տարածվում են սույն օրենքի 12-րդ և (կամ) 15-րդ հոդվածներով ներկայացվող պահանջները:»:

**ՀՈԴՎԱԾ** 4. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասը «15-րդ հոդվածի 4-րդ մասի,» բառերից հետո լրացնել «15.2-րդ հոդվածի 3-ից-11-րդ մասերի, 15.3-րդ հոդվածի (բացառությամբ՝ արտաքին գովազդի), 15.5-րդ հոդվածի 5-րդ մասի,» բառերը:

## ՀՈԴՎԱԾ 5. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից 1 տարի հետո:

2. Սույն օրենքի պաշտոնական հրապարակման պահից Օրենքի 15.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված որոշումը Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետք է ընդունի 3 ամսվա ընթացքում:

3. Բազմաբնակարան շենքերում, հանրակրթական, ուսումնական, մշակութային, առողջապահական և սոցիալական ծառայություններ իրականացնող հաստատություններում տեղակայված բաղնիքների (շոգեբաղնիքների), սաունաների և զվարճանքի, այդ թվում՝ հեստապարային, օբյեկտների գործունեությունն կարող է իրականացվել մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահը:

Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

*ՆԱԽԱԳԻԾ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***ՀՈԴՎԱԾ** 1.* Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 12-րդ գլխի վերնագրում «Առևտրի» բառից հետո լրացնել «և ծառայությունների» բառերը:

***ՀՈԴՎԱԾ** 2.* Օրենսգրքի 158-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Առևտրի, հանրային սննդի օբյեկտների վաճառողի, կենցաղային ծառայության օբյեկտի կատարողի, առևտրի իրականացման վայրի, զվարճանքի, այդ թվում՝ հեստապարային, օբյեկտի, բաղնիքի, սաունայի գործունեության կազմակերպչի պաշտոնատար անձանց և հեստապարային օբյեկտի հաճախորդի կողմից օրենքով սահմանված պահանջները խախտելը» .

2) լրացնել նոր՝ 33-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 39-րդ, 40-րդ, 41-րդ, 42-րդ, 43-րդ, 44-րդ, 45-րդ և 46-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15.2-րդ հոդվածի 3-ից-10-րդ մասերի պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

Սույն հոդվածի 33-րդ մասով նախատեսված արարքները վարչական տույժի նշանակման օրվանից մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15.2-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում հաճախորդի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապապատիկի չափով:

Սույն հոդվածի 35-րդ մասով նախատեսված արարքները վարչական տույժի նշանակման օրվանից մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում հաճախորդի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15.5-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապապատիկի չափով:

Սույն հոդվածի 37-րդ մասով նախատեսված արարքները վարչական տույժի նշանակման օրվանից մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

Հեստապարային օբյեկտի համար օրենքով արգելված տեղակայման վայրում ծառայություն մատուցելը՝
առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

Սույն հոդվածի 39-րդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝
առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով:

Համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հեստապարային օբյեկտների տեղակայման վայրերի ցանկից դուրս վայրում հեստապարային ծառայություն մատուցելը կամ համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հեստապարային օբյեկտների շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները կամ գործունեության թույլտվությունների պայմանները խախտելը `
առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

Սույն հոդվածի 41-րդ մասով նախատեսված արարքները վարչական տույժի նշանակման օրվանից մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝
առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

Բաղնիքների (շոգեբաղնիքների) կամ սաունաների կամ զվարճանքի (բացառությամբ՝ հեստապարային) օբյեկտների համար օրենքով արգելված տեղակայման վայրում ծառայություն մատուցելը՝
առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

Սույն հոդվածի 43-րդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝
առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութհարյուրապատիկի չափով:

Համայնքի ավագանու որոշմամբ սահմանված բաղնիքների (շոգեբաղնիքների), սաունաների և զվարճանքի (բացառությամբ՝ հեստապարային) օբյեկտների տեղակայման վայրերի ցանկից դուրս վայրում ծառայություն մատուցելը կամ համայնքի ավագանու որոշմամբ սահմանված բաղնիքների (շոգեբաղնիքների), սաունաների և զվարճանքի (բացառությամբ՝ հեստապարային) օբյեկտների շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները կամ գործունեության թույլտվությունների պայմանները խախտելը՝
առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

Սույն հոդվածի 45-րդ մասով նախատեսված արարքները վարչական տույժի նշանակման օրվանից մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութհարյուրապատիկի չափով:

*ՀՈԴՎԱԾ 3.* Օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 2-րդ մասում «զվարճանքի» բառից հետո լրացնել «, այդ թվում՝ հեստապարի» բառերը, «բաղնիքները (սաունաները)» բառերը փոխարինել «բաղնիքները (շոգեբաղնիքները), սաունաները» բառերով, իսկ «24.00-ից» բառից հետո լրացնել «, իսկ Երևան քաղաքում՝ ժամը 23.00-ից» բառերը:

*ՀՈԴՎԱԾ 4.* Օրենսգրքի 219.1-րդ հոդվածի 2-րդ մասում «158-րդ (բացառությամբ 2-րդ, 3-րդ, 12-րդ, 17-րդ, 19-րդ, 21-րդ, 26-րդ և 27-րդ մասերի)» բառերը փոխարինել «158-րդ (բացառությամբ 2-րդ, 3-րդ, 12-րդ, 17-րդ, 19-րդ, 21-րդ, 26-րդ, 27-րդ, 33-38-րդ մասերի)» բառերով:

*ՀՈԴՎԱԾ 5.* Օրենսգրքի 224-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «153,» թվից հետո լրացնել «158-րդ հոդվածի 33-38-րդ մասերով,» բառերը.

2) 2-րդ մասի 1-ին կետում «153,» թվից հետո լրացնել «158-րդ հոդվածի 33-38-րդ մասերով,» բառերը:

*ՀՈԴՎԱԾ 5.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից 1 տարի հետո:

Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***ՀՈԴՎԱԾ*** *1.* «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ 18.1-ին կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«18.1) որոշում է ընդունում համայնքի վարչական տարածքում գտնվող բաղնիքների (շոգեբաղնիքների), սաունաների, զվարճանքի, այդ թվում՝ հեստապարային, օբյեկտների շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումների, պահանջների և պայմանների, տեղակայման վայրերի ցանկի և գործունեության թույլտվությունների պայմանների վերաբերյալ.»:

***ՀՈԴՎԱԾ*** *2.* Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում «զվարճանքի» բառից հետո լրացնել «, այդ թվում՝ հեստապարային» բառերը, «բաղնիքներին (սաունաներին)» բառերը փոխարինել «բաղնիքներին (շոգեբաղնիքներին), սաունաներին» բառերով:

***ՀՈԴՎԱԾ*** *3.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

*ՆԱԽԱԳԻԾ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***ՀՈԴՎԱԾ*** *1.* «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-5-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«28. որոշում է ընդունում Երևանի վարչական տարածքում գտնվող բաղնիքների (շոգեբաղնիքների), սաունաների, զվարճանքի, այդ թվում՝ հեստապարային, օբյեկտների շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումների, պահանջների և պայմանների, տեղակայման վայրերի ցանկի և գործունեության թույլտվությունների պայմանների վերաբերյալ.»:

**ՀՈԴՎԱԾ** 2. Օրենքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը «բաղնիքներին» բառից հետո լրացնել «(շոգեբաղնիքներին)» բառով, «զվարճանքի» բառից հետո լրացնել «, այդ թվում՝ հեստապարային» բառերով:

***ՀՈԴՎԱԾ*** *2.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

*ՆԱԽԱԳԻԾ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

**«ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***ՀՈԴՎԱԾ*** *1.* «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 26 ՀՕ-185 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 1-ին մասի ե) կետում «զվարճանքի» բառից հետո լրացնել «, այդ թվում՝ հեստապարային» բառերը, «բաղնիքներին (սաունաներին)» բառերը փոխարինել «բաղնիքներին (շոգեբաղնիքներին), սաունաներին» բառերով, իսկ «24.00-ից» բառից հետո լրացնել «, իսկ Երևան քաղաքում՝ ժամը 23.00-ից» բառերը:

***ՀՈԴՎԱԾ*** *2.* Օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասում՝

1) 1-ին պարբերությունում «զվարճանքի» բառից հետո լրացնել «, այդ թվում՝ հեստապարային» բառերը, «բաղնիքները (սաունաները)» բառերը փոխարինել «բաղնիքները (շոգեբաղնիքները), սաունաները» բառերով.

2) «բ» կետում «զվարճանքի» բառից հետո լրացնել «(բացառությամբ՝ հեստապարային)» բառերը.

3) «գ» կետում «բաղնիքների (սաունաների)» բառերը փոխարինել «բաղնիքների (շոգեբաղնիքների), սաունաների» բառերով.

4) լրացնել նոր՝ «է» կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«է) հեստապարային օբյեկտների համար՝ 500000-1000000 դրամ:»:

***ՀՈԴՎԱԾ*** *3.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

*ՆԱԽԱԳԻԾ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***ՀՈԴՎԱԾ** 1.* «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի ապրիլի 30-ի ՀՕ-55 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածի 2-րդ մասում «և ծխախոտի» բառերը փոխարինել «, ծխախոտի և հեստապարային ծառայության» բառերով:

***ՀՈԴՎԱԾ** 2.* Օրենքի 15-րդ հոդվածը լրացնել նոր՝ 16-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«16. Արգելվում է հեստապարային ծառայության գովազդում սեռական բնույթի որևէ տեղեկատվություն, հեստապարերի նկարագրություն կամ դրանք նկարագրող լուսանկարներ կամ պատկերներ զետեղելը: Հեռուստատեսությամբ կամ ռադիոյով հեստապարային ծառայությունների գովազդը կարող է հրապարակվել ժամը 24.00-ից մինչև 06.00-ն ընկած ժամանակահատվածում:»:

***ՀՈԴՎԱԾ** 3.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

*ՆԱԽԱԳԻԾ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված** 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 315.3-րդ հոդվածով.

«**Հոդված** 315.3 **Բաղնիքների (շոգեբաղնիքների) կամ սաունաների կամ զվարճանքի, այդ թվում՝ հեստապարային, օբյեկտների համար օրենքով արգելված տեղակայման վայրում ծառայության մատուցումը չդադարեցնելը, համայնքի ավագանու որոշմամբ սահմանված բաղնիքների (շոգեբաղնիքների), սաունաների և զվարճանքի, այդ թվում՝ հեստապարային, օբյեկտների տեղակայման վայրերի ցանկից դուրս վայրում ծառայության մատուցումը չդադարեցնելը**

Իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բաղնիքների (շոգեբաղնիքների) կամ սաունաների կամ զվարճանքի, այդ թվում՝ հեստապարային, օբյեկտների համար օրենքով արգելված տեղակայման վայրում ծառայության մատուցումը չդադարեցնելը կամ համայնքի ավագանու որոշմամբ սահմանված բաղնիքների (շոգեբաղնիքների), սաունաների և զվարճանքի, այդ թվում՝ հեստապարային, օբյեկտների տեղակայման վայրերի ցանկից դուրս վայրում ծառայության մատուցումը չդադարեցնելը, որոնք կատարվել են նույն արարքի համար կրկնակի վարչական տույժ նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

- պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի չորսհազարապատիկի չափով կամ ազատազրկմամբ՝ մեկից երկու տարի ժամկետով:»:

*ՀՈԴՎԱԾ 2.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից 1 տարի հետո:

Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

## Հիմնավորում

**«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի**

Հեստապարային ծառայության մատուցումը առնչվում է ոչ միայն զուտ բարոյական, այլև իրավական ու սոցիալ-քաղաքական այնպիսի առանցքային նշանակություն ունեցող ոլորտի հետ, որում ծագած հարաբերությունների օրենսդրական կարգավորման բացակայությունը որոշակիորեն նվազեցնում է մարդկանց առևտրի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային իրավունքի նորմերի գործնական կիրառման հնարավորությունները:

Նշված ոլորտի իրավական կարգավորման անհրաժեշտությունը թելադրված է նաև միջազգային փորձով: Մասնավորապես, ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրականացված ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ ծառայության հիշյալ տեսակը, առանց որևէ բացառության, հանդիսանում է ինքնուրույն օրենսդրական կարգավորման առարկա: Հատկապես, համաչափ վերլուծության են ենթարկվել Հոլանդիայի, Մեծ Բրիտանիայի, Նոր Զելանդիայի, Ճապոնիայի, Ավստրալիայի, Կանադայի, ԱՄՆ-ի օրենսդրական ակտերը: Ընդ որում, նշված օրենսդրական ակտերով ծառայության այդ տեսակը հանդիսանում է բազմաթիվ սահմանափակումներով ուղեկցվող լիցենզավորման ենթակա գործունեություն:

Հատկանշական է այն, որ բոլոր այդ օրենսդրական ակտերի հիմքում դրված են մարդկանց առևտրի, կանանց և երեխաների իրավունքների մասին միջազգային իրավական փաստաթղթերը, մասնավորապես, որոշ օրենսդրական ակտերում ուղղակի հղում կա «Երեխայի իրավունքների մասին», «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին», «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» Եվրոպական Կոնվենցիաների և նմանաբնույթ այլ միջազգային իրավական փաստաթղթերի վրա:

Նշված փորձի ուսումնասիրությունը վկայում է նաև այն մասին, որ այդ ոլորտում իրավական կարգավորումները միմյանցից էապես չեն տարբերվում, իսկ առկա տարբերակված մոտեցումները վերաբերում են ոչ էական հարցադրումներին: Ասվածը, թերևս, վկայում է այն մասին, որ այդ ոլորտում ավանդաբար ձևավորված մոտեցումների ու չափանիշների հիման վրա, հատկապես վերջին շրջանում ընդունվել են միասնական դրույթներ բովանդակող օրենսդրական ակտեր. բնորոշ է այն, որ նշված օրենսդրական ակտերը հիմնականում ընդունվել են 2005-2009թթ.:

Համեմատական վերլուծությունը հնարավորություն է տալիս միջազգային փորձի հիման վրա առանձնացնելու հետևյալ հիմնադրույթները՝

- գործունեության տվյալ տեսակը համարվում է լիցենզավորման ենթակա ձեռնարկատիրություն,
- հեստապարերի ծառայություն, որպես կանոն, մատուցվում է միայն բնակավայրերի այնպիսի հատվածում, որտեղ բացակայում են բնակելի շենքեր, կրթական հաստատություններ և այլն,
- նշված հաստատություններ կարող են հաճախել միայն 18 տարեկանից բարձր տարիքի անձինք, ինչպես նաև պարուհիներ կամ պարողներ կարող են լինել միայն 18 տարեկանից բարձր տարիքի անձինք,
- հեստապարային ծառայություն մատուցող կազմակերպությունում սպասարկում իրականացնող անձանց տարիքը պետք է բարձր լինի 21 տարեկանից,

- հեստապարային ծառայություններ մատուցող կազմակերպությունները պետք է ունենան համապատասխան ներքին անվտանգության ծառայություններ և այլն:

Վերը նշված չափանիշները բնավ սպառիչ չեն, պարզապես սույն հիմնավորմամբ փորձ է արվել առանձնացնելու առավել էական օրենսդրական դրույթները: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ ծառայության այս տեսակի պարագայում օրենսդրությունը նախապատվությունը տալիս է գործունեության այդ տեսակին առնչվող հարաբերությունների հնարավորինս մանրամասն կարգավորմանը: Այսպես, լիցենզիայի պայմաններ են հանդիսանում հաճախորդի որոշ վարքագծի կանոնների հաստատումը (օրինակ, պարուհու կամ պարողի հետ որևէ ֆիզիկական շփումից ձեռնպահ մնալը և այլն), այդ կազմակերպություններին պատկանող լուսավորված ավտոկայանատեղերի առկայությունը, գովազդներում և ցուցանակներում հեստապարերի նկարագրության կամ պատկերների բացակայությունը, ընդհանուր սրահ, պարողների և պարուհիների մուտքի ու ելքի կանոնները, հեստապարային օբյեկտներ որոշակի իրերով (զենք, զինամթեք) մուտք գործելու արգելքը և այլն:

Քննարկման ներկայացված օրենքների նախագծերը հիմնականում ներառում են այդ չափանիշները (բացառությամբ՝ հեստապարային օբյեկտի գործունեության կազմակերպչի լիցենզավորման, որի համար հիմք են ընդունվել «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույթները և ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականությունը և այլ դրույթների, որոնք արդեն իսկ կարգավորված են օրենսդրությամբ, օրինակ՝ զենք, զինամթերքով մուտք գործելը կամ կկարգավորվեն համայնքների ավագանիների որոշումներով), սակայն իրավական կարգավորումը դրանով ավարտված համարել չի կարելի, քանզի «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ ոդվածի 28-րդ կետի համաձայն, Երևանի ավագանին իրավասու է սահմանելու գործունեության թույլտվության լրացուցիչ պայմաններ: Մասնավորապես, Երևանի ավագանին իրավասու է սահմանելու զվարճանքի օբյեկտների վայրերի ցանկը, ինչից բխում է, որ սոսկ բնակելի շենքերից կամ կրթական, ուսումնական, մշակութային և առողջապահական հաստատություններից որոշակի հեռավորությունը դեռևս բավարար պայման չէ նմանատիպ ծառայությունների կազմակերպման համար:

Նախագծերի փաթեթով առաջարկվում է ընդլայնել Երևանի ավագանու լիազորությունները նաև հեստապարային օբյեկտների շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումների, պայմանների և պահանջների մասով, ինչպես նաև առաջարկվում է վերապահել լիազորություն՝ սահմանելու հեստապարային օբյեկտների գործունեության թույլտվության բոլոր (ոչ միայն լրացուցիչ) պայմանները, ինչը հնարավորություն կտա ավագանուն մեկ իրավական ակտով կարգավորել հեստապարային օբյեկտների գործունեության հետ կապված բոլոր հարաբերությունները:

Նման լիազորություն (որոշում ընդունելու) առաջարկվում է վերապահել նաև բաղնիքների (շոգեբաղնիքների), սաունաների և զվարճանքի այլ օբյեկտների մասով, ինչպես նաև նշված լիազորությունները վերապահել բոլոր համայնքների ավագանիներին:

Նշված աաջարկները բխում են Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի (ընդունվել է 15.10.1985թ., Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2002 թվականի մայիսի 1-ից) 3-րդ և 4-րդ հոդվածների և ՀՀ Սահմանադրության 33-րդ հոդվածի դրույթներից:

Բաղնիքների, սաունաների և զվարճանքի օբյեկտների գիշերային ժամերի գործունեության կտրվածքով ևս տեղական ինքնակառավարման մարմիններին տրված է որոշակի լիազորություն. այսպես, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն վարչական շրջանի ղեկավարը վարչական շրջանի տարածքում զվարճանքի օբյեկտներին տալիս է ժամը 23:00-ից հետո գործելու թույլտվություն, իսկ այլ համայքներում՝ նշված թույլտվությունը տալիս է համայնքի ղեկավարը, սակայն ժամը 24.00-ից գործելու համար՝ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, սակայն օրենսդրությամբ սահմանված չէ «զվարճանքի օբյեկտ» հասկացությունը:

Նախագծերի փաթեթով կարգավորում է տրվում «զվարճանքի օբյեկտների» գործունեությանը և դրանց ներկայացվող պահանջներին:

Ըստ էության, այս ոլորտում առանձնահատուկ իրավական կարգավորումների բացակայության պայմաններում, հեստապարերը դիտվել են, որպես կատարողական արվեստի

հետ կապված ծառայություններ և դրանց վրա տարածվել են բացառապես «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդհանուր պահանջները: Մինչդեռ, տվյալ ծառայության բնույթը համատեղելի չէ սոսկ «կատարողական արվեստի ծառայության» հասկացության հետ և, ինչպես արդեն նշվեց, օժտված է լրացուցիչ նկատելի առանձնահատկություններով:

Չնայած այն հանգամանքին, որ հեստապարային ծառայություն մատուցող օբյեկտները, մեր կարծիքով, համարվում են զվարճանքի օբյեկտներ, նախագծերով անհրաժեշտ ենք գտել առանձին կարգավորել հեստապարային ծառայությունը՝ կարևորելով դրա առանձնահատկությունները, որոնք ներկայացված են սույն հիմնավորմամբ:

Կարծում ենք, որ բաղնիքների, սաունաների և զվարճանքի, այդ թվում՝ հեստապարային, օբյեկտների համար արգելվող տեղակայման վայրում մինչև 1 տարի գործունեություն իրականացնելու ժամկետները, իրատեսական են նաև արդեն իսկ գործող տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության տեսանկյունից. վերջիններս հնարավորություն կունենան ողջամիտ ժամկետում միջոցներ ձեռնարկել՝ վերակազմակերպելու իրենց գործունեությունը:

Որոշ նկատառումներով քննարկման ներկայացված օրինագծերը սահմանում են այնպիսի սահմանափակումներ, որոնք միջազգային փորձի տեսանկյունից, կարող են համեմատաբար խիստ համարվել, մասնավորապես դա վերաբերում է ծառայության այդ տեսակի համար վայրերի ընտրությանը (ինչպես արդեն նշվեց, բացի ներկայացված օրենքներով նախատեսված սահմանափակումներից, լրացուցիչ սահմանափակումներ կարող է նախատեսել նաև համայնքների ավագանին): Տվյալ դեպքում, կարծում ենք լրացուցիչ սահմանափակումներն արդարացված են և առավել համահունչ են ինչպես միջազգային համաձայնագրերի պահանջներին, այնպես էլ ձևավորված սոցիալական ավանդույթներին: Բոլոր դեպքերում, կարծում ենք, լիարժեք ապահովվել է անհրաժեշտ հավասարակշռվածություն ձեռնարկատիրության ազատության և մյուս կողմից՝ բնակչության, այդ թվում՝ կանանց ու երեխաների, իրավունքների սահմանադրական հիմնադրույթների հարաբերակցությունում:

Օրենսդրական փաթեթում առկա են որոշ պայմաններ, որոնք ավանդաբար պարտադիր չեն համարվել ծառայությունների մատուցման մյուս ոլորտների պարագայում: Այս հանգամանքը պայմանավորված է տվյալ ծառայության տեսակի առանձնահատկություններով թելադրված անհրաժեշտությամբ: Մասնավորապես, ներքին անվտանգության ծառայության անհրաժեշտությունը պայմանավորված է տվյալ միջավայրում միջադեպերի ծագման առավել մեծ հավանականության հետ:

Ծառայության հիշյալ տեսակի կազմակերպման տեսանկյունից, բնականաբար, քննարկման ներկայացված օրենսդրական ակտերի նախագծերը կհանդիսանան հիմնական, սակայն որքան էլ դրանցում հնարավորինս հանգամանորեն կարգավորված լինեն գործունեության այդ տեսակի կազմակերպմանն առնչվող հարաբերությունները, դա բնավ չի նշանակում, որ ձեռնարկատիրական գործունեության իրավական ընդհանուր կարգավորումները կիրառելի չեն այս ոլորտում:

Հեստապարային ծառայությունների մատուցման՝ օրենսդրությամբ ամրագրված պայմանների խախտման համար վարչական պատասխանատվություն սահմանելը համարում ենք իրավաչափ այն նկատառումով, որ առավելապես կերաշխավորվի կանանց և երեխաների իրավունքների պաշտպանությունը, բնակչության հանգիստը զերծ կպահվի անհարկի խաթարումներից: Դրանք նորույթ են, որոնց համար գործող օրենսդրությամբ, բնականաբար, համապատասխան պատասխանատվություն սահմանված չէ:

Նույնը վերաբերվում է նաև բաղնիքներում, սաունաներում և զվարճանքի այլ օբյեկտներում ծառայությունների մատուցման պայմանների խախտման համար վարչական պատասխանատվություն սահմանելուն:

Առաջարկվել է հիշյալ վարչական զանցանքների մի մասի քննությունը և վարչական տույժ նշանակելու իրավասությունը վերապահել ոստիկանության մարմիններին: Տվյալ դեպքում նկատի է ունեցվել այն, որ վերը նշված կանոնները առավելապես փոխկապակցված են հասարակական կարգի հետ, որի պահպանության պարտականությունը հիմնականում վերապահված է ոստիկանությանը:

Տեղական տուրքի չափը սահմանելիս հաշվի են առնվել այնպիսի չափանիշներ, ինչպիսիք են ձեռնարկատիրության այդ տեսակի պարագայում հասարակական կարգի պահպանության, կանանց իրավունքների ու երեխաների պաշտպանության ոլորտում անվտանգության ռիսկերի բացառման առնչությամբ պետության գործառույթների ծավալը և դրա համար անհրաժեշտ ֆինանսական ներդրումները, մարդկային ներուժը և այլն:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» կատարվող լրացումները, ինչպես նաև «Տեղական ինքնակառավարման մասին», և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում կատարված այլ լրացումները կրում են տեխնիկական բնույթ և բացառապես բխում են «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի դրույթներից, ինչպես նաև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթներից (ժամը 23.00-ից գործունեություն իրականացնելու թույլտվություն տալու մասով):

Հաշվի առնելով հեստապարային ծառայության հիշյալ տեսակին ներկայացվող պահանջների բնույթը, օրենսդրական նախագծերի փաթեթում ներառվել է նաև «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը: Մասնավորապես, ձեռնարկատիրության այդ տեսակին վերաբերող գովազդին ներկայացվող սահմանափակումները հանահունչ են վերը նշված հիմնադրույթներին և միջազգային համաձայնագրերի նորմերով ամրագրված դրույթներին: Ընդ որում, գովազդի վերաբերյալ օրենսդրության խախտումների համար վարչական պատասխանատվությանն անդրադարձ չի արվել, քանզի «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածով արդեն իսկ կանոնակարգված են այդ հարաբերությունները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բաղնիքների կամ սաունաների կամ զվարճանքի, այդ թվում՝ հեստապարային, օբյեկտների գործունեությունը կազմակերպող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը կարող են չդադարեցնել վերը նշված օբյեկտների համար օրենքով արգելված, ինչպես նաև համայնքի ավագանու որոշմամբ նշված օբյեկտների համար սահմանված տեղակայման վայրերի ցանկից դուրս վայրում ծառայության մատուցումը՝ կարմակերպչի պաշտոնատար անձի նկատմամբ կրկնակի վարչական տույժ նշանակելուց հետո, առաջարկվում է քրեորեն պատժելի դարձնել նշված արարքները և համապատասխան լրացում կատարել ՀՀ քրեական օրենսգրքում:

Առաջարկը պայմանավորված է վերը նշված հիմնավորումներով:

Սույն օրենսդրական նախաձեռնությունը հնարավորություն կտա առավել հուսալի դարձնելու կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության երաշխավորվածությունը, զերծ կպահի բնակչության հանգիստն անհարկի խաթարումներից, ինչպես նաև կնպաստի բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ձևավորմանը:

Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք Ն Ե Ր

**«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության և դրանց ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացման կամ նվազեցման մասին**

1. Օրենքների նախագծերի փաթեթի ընդունման կապակցությամբ առաջանում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված, ինչպես նաև ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 27-ի N 347-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին որոշումների ընդունման անհրաժեշտություն:

2. Օրենքների նախագծերի փաթեթի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ